ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք 04 մարտի 2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Նեկտար Հովհաննիսյանը, Սոնա Մարգարյանը, Տիգրան Նազարյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Աշոտ Հարությունյանը, Լուսինե Մարտիրոսյանը և Գառնիկ Խաչատրյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նստաշրջանի՝ մարտի 4-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 4-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին:

3) Վարդան Արծրունու Ավագյանին Եղեգնաձոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակելու մասին:

4) Կարեն Սերյոժայի Բաբայանին Եղեգնաձոր համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի բյուջեն.

ա/ եկամուտների գծով - 995466.1 հազար ՀՀ դրամ,

բ/ ծախսային գծով- 995466.1 հազար ՀՀ դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3:

5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդ/՝ հատված 4:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդ/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ հատված 5:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:

8.Սահմանել, որ

ա/ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները,

բ/ ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները հոդվածների միջև չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ն/

Լսեցին.

ՎԱՐԴԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 05-Ա որոշմամբ հաստատված՝ Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու անդամ Վարդան Արծրունու Ավագյանին նշանակել Եղեգնաձոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:

2. Եղեգնաձոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալի գործառույթներն իրականացնել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին.

ԿԱՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 05-Ա որոշմամբ հաստատված՝ Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Կարեն Սերյոժայի Բաբայանին նշանակել Եղեգնաձոր համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:

2. Եղեգնաձոր համայնքի ղեկավարի տեղակալի գործառույթներն իրականացնել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ՝

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ _____

ՄԱՐԱՏ ՇԱՀԲԱՋՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____